



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2018թ. մայիսի 24

N 49

ԼԻԴԱ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ԱՄԱՆՈՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Նոր Ամանոսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2018 թվականի մայիսի 21-ին անցկացված մրցույթի արդյունքները և Լիդա Մարկոսյանի 2018 թվականի մայիսի 23-ի անձնական դիմումը՝ **կարգադրում եմ**.

2018 թվականի մայիսի 25-ից Լիդա Վաչագանի Մարկոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Նոր Ամանոսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ լուծելով 2016 թվականի մայիսի 3-ին նրա հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Ժամանակավոր պաշտոնակատար

Մ. ԱԳԱՅԱՆ